— Այո՛, եթէ ունենա՛ր... — պատասխանեց վարպետը վրդովուած ձայնով: — Բայց հայը երբ երկու ղուրուշ ունի, միշտ մտածում է այդ բանի վրայ, թէ ի՞նչ գնեմ ու ի՞նչ ծախեմ, որ երկուսը երեք դարձնեմ: Նա այլեւս ուրիշ բանի վրայ չէ մտածում: Եւ կառավարութիւնը սովորել է նրան միշտ այդպէս տեսնել, եւ երբ նրա ձեռքում մի զէնք է նկատում, իսկոյն խլում է՝ ասելով, «այդ քո գործը չէ, դու գնայ քո արշինով պարապի՛ր»... Եւ հայը մնում է, որպէս մի անպաշտպան որս քրդի եւ տաճկի ձեռքում: Նրա հունձքի արտերը այրում են, նրա այգիները կտրատում են, եւ տէրը կանգնած, ձեռքերը փակած, միայն բաց աչքերով նայում է ու ա՛խ քաշում...

— Միթէ՞ այդ աստիճան անարդար է կառավարութիւնը, — հարցրի ես:

— Ինչ՛ կառավարութիւն: Այստեղ կառավարութիւն չկայ, այստեղ կան միայն կեղեքիչ եւ ինքնակամ կառավարիչներ, որոնք միեւնոյն բարբարոսութիւններն են գործ դնում: Լսեցէք, ես ձեզ կը պատմեմ մի փաստ, որից կարել է հասկանալ, թէ ինչ պտուղներ են մեր կառավարիչները: Մեր քաղաքը վաղուց անտի զինորանոց չունէր: Զինորներին սովորաբար բաժանում էին շրջակայ գիւղերի հայոց տներում, եւ ամէն մի ընտանիք պարտաւոր էր մի քանի զինորներ պահել: Կարող էք երեւակայել, թէ ի՞նչ բան է անկարգ բաշիբոզուկը հայ ընտանիքի մէջ: Նա իրան կատարեալ տան տէր է համարում եւ թոյլ է տալիս ամէն տեսակ կամայականութիւն: Գիւղացիները, չկարողանալով համբերել, դիեցին նահանգապետ փաշային, խոստացան, թէ իրանց ծախքով պատրաստ են քաղաքի մօտ մի զինորանոց կառուցել, միայն թէ ազատուեն իրանց անկարգ հիւրերից: Փաշան ընդունեց: Հաւաքուեցան, խորհեցին, հաշուեցին շէնքի ծախսերը, եւ բաժանելով իրանց մէջ, վճարեցին ամբողջ գումարը: Փողերի մեծ մասը դրա ու նրա կոկորդն անցաւ, եւ վերջը շէնքի բոլոր փայտեղէնները դարձեալ գիւղացիների այգիներից կտրեցին:

— Ձրի՞:

— Այո՛, ձրի: Եւ մեծ անգթութիւնը նրանումն էր, որ տապարը ծառի տիրոջ ձեռքը տալով եւ նրա գլխին ծեծելով, հէնց իրան՝ տիրոջն էին ստիպում կտրել իր սիրելի ծառը, որպէս դանակը հօր ձեռքը տալով՝ ստիպում են կտրել սիրելի որդու պարանոցը:

— Ապա ի՞նչ էին շինում ձեր քաղաքի սրբազան առաջնորդը եւ ձեր էֆենդի աղաները: Ինչո՞ւ ժողովրդի այդ պատուելի ներկայացուցիչները չբողոքեցին: